


Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կաճառին

Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան» մղաստով

Publié avec le concours de la « Fondation Calouste Gulbenkian »



1401-79

ԵՐԵՎԱՆ. ՄԻԻԹԱՐ ԱՌԲԱՆՈՐ

ԾՆՆԴԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԻՐԱՄԵՍԿԻՆ ԱՌԻԹՈՎ

(1676 - 1976)

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ՈՒՂՂՈՒԱԾ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Հայ ժողովուրդի պատմութեան համար՝ երկունքի ժամանակաշրջան մը կրնայ նկատուիլ ժէ. դարը, ուր բազմադարեւ ճիւղեր թափուեցան, թօթափելու համար օտար լուծին բերած երեքդարեան թմրութիւնը:

Քաղաքական դետնի վրայ՝ Իսրայէլ Օրիէն մինչեւ Դաւիթ Բէկի յաղթանակները, մեծղի աշխատանքներ եղան հայ ազատագրական գաղափարի իրականացման:

Եկեղեցական մարդին մէջ՝ Մովսէս Տաթեւացի Կաթողիկոսին սկսած վերանորոգումը եւ վանական բարեկարգութիւնը խոշոր ձեռնարկ էր, որ պիտի շարունակուէր մինչեւ Յակոբ Զուլալեցին:

Գիտական ասպարէզին մէջ՝ Մելքիսէթ Վրդ.ի թափած ճիւղերը կ'ուզէին վերականգնել հայ փիլիսոփայական միտքը, որ Սիմէոն Զուլալեցիով պիտի զարգանար:

Մշակոյթի բնագաւառին մէջ՝ տպագրութեան ձեռնարկը, սկիզբ առած Յակոբ Մեղապարտով, իր բարձունքին պիտի ժամանէր Ոսկան Վրդ.ի Աստուածաշունչին չքեղ հրատարակութեամբ:

Անտարբեր չէ նաեւ Հոռմի Ուրբանեան Վարժարանի հասցուցած հայ աշակերտներու նպաստը՝ գիտական մակարդակի բարձրացման տեսակէտէն, որուն երեւելի ներկայացուցիչ կը հանդիսանար Խաչատուր Վրդ. իր գրումները:

Արեւմուտքի հետ մշակուած յարաբերութիւններն ալ, ըլլա՛յ մեր Կաթողիկոսներու թղթակցութիւններով՝ Հոռմի Պապերուն հետ, ըլլա՛



լուծումներու օգտակարութեան: Բայց սուրբերու յատուկ հաւատքով եւ հնազանդութեան հոգիով տոգորուած՝ ընդունեցաւ այն ամէն կարգադրութիւն, որ հեղինակութենէն կու գար, թէեւ բացառապատօնէն եւ ազատաբար արտայայտեց իր տարբեր մտածութիւնները՝ պատասխանատու Մեծերուն, միշտ մնալով պատշաճ յարգանքի եւ սիրոյ սահմաններուն մէջ: Գիտակից էր՝ թէ ժամանակն է որ պիտի ուղղէր նախապաշարումները եւ հասունցնէր դադափարները:

Այս հաւատքով ձեռնարկեց իր վանքի շինութեան Պեղոպոնեսեան թերակղզիի Մեթոն բերդաքաղաքին մէջ, որ այդ ատեն Վենետիկի գերիշխանութեան ենթակայ էր: Ու երբ ամէն ինչ կարգաւորուած ու սարքուած էր, եւ գործը ընթացք առած՝ կը յառաջանար, ահա մօտալուտ պատերազմը՝ Օսմանեան բանակներու շոինդով, կը ստիպէր զինքը երկրորդ անգամ ձեռք առնել պանդխտութեան դաւազանը ու մեկնիլ Վենետիկ, 1715ին, իր ետին թողլով նորակերտ վանքն ու եկեղեցին:

Ադրիականի ափերուն կանգնած լոյսի եւ գիտութեան մայրաքաղաքին մէջ՝ Մխիթար չլացաւ, այլ իր խոհական հեռատեսութեամբ ընտրեց բնակութիւն հաստատել փոքրիկ եւ լքուած կղզեակի մը մէջ, հեռու՝ քաղաքին ժխորէն, Վենետիկի Ծերակոյտէն ընդունելով զայն՝ իբրեւ մնայուն բնակութիւն (8 Սեպտ. 1717): Ու հոն կերտեց նոր մենաստան, շէնցուց այդ բոլորներու երբեմնի ապաստանը, վերածելով զայն փոքրիկ հայրենիքի մը: շուրջ երեսուն տարի ապրեցաւ այս կղզեակին վրայ՝ վանականի խստակօճ կեանք մը, ժամերը նուիրագործելով՝ շինարարական, վարչական, ուսուցչական, ուսումնասիրական, հրատարակչական ու մանաւանդ ճգնողական եւ աղօթական գործունէութեամբ:

Ինք էր Առաջնորդը վանքին, հայրը՝ վանականներուն, դաստիարակը՝ պատանիներուն, եւ օրինակը՝ ամէնուն: Տեւականօրէն յարաբերութեան մէջ էր քարոզչութեան ղրկած իր աշակերտներուն հետ, որոնք սփռուած էին Փոքր Ասիոյ հայաբնակ զանազան քաղաքներուն եւ գիւղերուն մէջ, կամ ալ Արեւմուտքի հայկական գաղթավայրերուն մէջ: Խորհրդատու եւ քաջալեր էր բազմաթիւ բարեկամներու, որոնք ամէն հարցի համար իրեն կը դիմէին: Երբեմն հարկադրուած էր պաշտպան ու ջատագով հանդիսանալ իր գործին եւ ուղղութեան՝ Հոռմի բարձրագոյն իշխանութիւններուն առջեւ, յաճախ նշաւակ նախանձի եւ հակառակութեան՝ իր հարազատներէն իսկ, որոնց համբերութեամբ եւ անյիշալար հոգիով յաղթող կը հանդիսանար: Իր շինարար գործունէութեամբ գրաւած էր ազգային ոգիին նախանձախնդիր Սաւուղներն անգամ, որոնք այժմ իր հրատարակութիւնները ձեռք ձեռք կը խլէին:

Այսպէս վաստակաւոր եւ յոգնաբեկ՝ վախճանեցաւ Մխիթար, զգեստնուած մանկութենէն ի վեր հետը աճող հիւանդութիւններէն, 74 տարեկանին (27 Ապրիլ 1749), աւելի քան կէս դար կառավարելով իր հիմնած Միաբանութիւնը, որ պիտի շարունակէր իր սկսած գործը:

Հերոս մը չէր Մխիթար՝ բառին դիցաբանական իմաստով, այլ նուիրեալ հոգի մը, հաւատարիմ՝ իր յանձնառութիւններուն, եւ հաւատացող՝ իր դադափարականին: Ապրող առօրեայ կեանքը՝ իր ցաւերով եւ ուրախութիւններով, միօրինակութեամբ եւ անակնկալներով, ձախորդութիւններով եւ յաջողութիւններով, առանց աչքէ հեռացնելու նպատակը՝ որուն համար ձեռնարկած էր գործին, եւ ուղեցոյցը՝ որուն կ'ուղղէր իր քայլերը: Թէեւ օժտուած մտքի եւ մանաւանդ կամքի բացառիկ կարողութիւններով, սակայն ունէր իր կարօտութիւնները՝ Ֆիզիքական կամ խառնուածքի, որոնք իր ամէնօրեայ խաչը կը կազմէին, զոր պէտք էր ուսամբարձ տանիլ Խաչեալին ետեւէն: Եւ խաչը եղաւ Մխիթարի անբաժան ընկերը, զոր հան սիրեց եւ որուն փարեցաւ:

Ահա օրինակը՝ որ մեր առջեւ կը պարզուի այսօր. եւ յետ երեք դարերու հեռաւորութեան, ան կը մօտենայ ամէն անոնց՝ որ կ'ուզեն սիրով հետեւիլ իրեն: Մխիթար միշտ խուսափած է մարդկային դովեաստներէ, փառաբանութիւններէ կամ յուշարձաններէ. այսօր ալ իր միակ պարծանքն ու փառքը իր որդիներուն հաւատարմութիւնն է՝ իրենց ուխտին, փարումը՝ իր դադափարականին եւ դադափալին: Զինք պատուելու ճշմարիտ կերպն ալ է՝ ընդունիլ եւ ճանչնալ անոր համոզումներուն անկեղծութիւնը եւ ուղղամտութիւնը: Հաւանոր համոզումներուն անկեղծութեան, որոնք արմատն են իր մոգումները՝ հաւատքի եւ առաքինութեան, որոնք արմատն են իր գործին բեղնաւորութեան, որոնք ահա՛ երեք դարեր շարունակ եկան փաստել՝ թէ ճիշտ էր ուղին, զոր ընտրած էր Մխիթար: Մենք վրստահ ենք՝ թէ անոր հանդէպ հիացումը աւելի կատարեալ եւ ընդհանրական պիտի դառնայ, երբ ամբողջապէս իրականանայ անոր տեսլականը:

* * *

Նախախնամական բարեգէպ շնորհք մը նկատելու ենք՝ որ մեր օրերուն կը զուգադիպի Երանաշնորհ Մխիթար Աբրահօր ծննդեան 300ամեայ յորբելանը:

Մեզի համար, այս սքանչելի առիթը նուիրական պարտականութիւն կը դառնայ՝ որդիական ջերմ սիրով տօնելու, կամ լաւ եւս՝ արծարծելու անոր յիշատակը եւ հոգին մեր մէջ, ուղեցոյց առնելով անոր թողած սրբազան կտակը եւ օրինակը:

Արդարեւ Մխիթարի թողած օրինակը միշտ այժմեական է եւ ազդու: Ան եղած է վերանորոգող մը կրօնաւորական կեանքին, սկըսելով իր անձէն, եւ առաջնորդելով իր հետեւորդները դէպի կրօնաւորական հարազատ եւ աւետարանական ապրում:

Այսօր ալ, Եկեղեցին, իր ամէնէն հեղինակաւոր ձայնովը կոչ կ'ուղղէ կրօնաւորներուն՝ վերանորոգուելու: Մեզի համար, ուրեմն, վերանորոգումի աշխատանքը հրամայական դարձած հրաւեր է, եւ ան պէտք է սկիզբ առնէ՝ նախ մեր անձէն, ճառագայթելու համար մեր շուրջը եւ խմորելու զանգուածը: Ամէն միաբան պէտք է զգայ պատասխանատուութիւնը՝ արծարծելու իր մէջ Հիմնադրին հոգին, նուիրելով այս յորեկինական տարին՝ ծանօթանալու անոր, աւելի ճիշտ՝ փորացնելու այս ծանօթութիւնը եւ խորհրդածելու անոր կեանքին եւ դործին, առաքինութիւններուն եւ ուսուցման վրայ, ներշնչուելու համար անկէ, խրախուսուելու անոր օրինակով, եւ աւելի մօտէն հետեւելու անոր լուսաւոր հետքերուն:

Վերանորոգման հիմնական ու էական դործերէն մէկն ալ Մխիթարի համար այն եղաւ՝ որ անհատական ձեռնարկը հաւաքականի վերածեց, հիմնելով այս Միաբանութիւնը, առաջինը իր տեսակին մէջ, հայ իրականութենէն ներս: Անով Մխիթար ո՛չ միայն կը բազմապատկէր իր ոյժերը եւ ջանքերը՝ ընդհանրացնելու համար այս վերանորոգումը, այլ նաեւ կը տեւականացնէր զայն՝ յաջորդներուն յանձնելով շարունակել: Այս հաւաքական աշխատանքը՝ Մխիթարի օրով, ինչպէս եւ յաջորդ շրջաններուն, իր արդիւնքները տուաւ, որովհետեւ միաձոյլ, միասիրտ ու կարգապահ էր այս Միաբանութիւնը, ինչպէս կը վկայէին բարձրաստիճան եկեղեցական պատասխանատու անձեր անգամ, որոնք մօտէն ճանչցած էին Միաբանութեան ներքին կեանքը:

Այսօր ալ նոյն հաւաքական վերանորոգումը կարեւոր է մեզի, որպէսզի մեր վաստակը եւ առաքելական ջանքերը արդիւնաբեր ու բեղուն ըլլան, եւ կարենանք իրականացնել Մխիթարի տեսլականը՝ հայ ժողովուրդի հոգեւոր ու մտաւոր լուսաւորութիւնը: Որովհետեւ այսօր ալ մեր ժողովուրդը՝ աշխարհի չորս ծագերուն ցրուած, կը կարօտի նոր Մխիթարներու, որ գիտնան բանալ սառնապատ ճամբան եւ առաջնորդել անոր քայլերը դէպի լուսաւոր բարձունքներ:

* * *

Արդ, մինչ կ'ոգեկոչենք մեր Երանաշնորհ Հիմնադրին ծննդեան 300ամեայ յորեկեանը, պահ մը կանգ առնենք՝ նկատելու անոր սըրբաւարները սէրը Աստուծոյ հանդէպ, որ պէտք է խրախուսէ մեր ալ հոգին՝ նոյն եռանդով փարելու այդ սիրոյն, ինչպէս նաեւ մեր ան-

ձին սրբակերտումի ու կատարելութեան դործին. դիտենք անոր հրաբորբոք սէրը՝ մերձաւորին հանդէպ, որ պէտք է խանդավառէ մեր ալ սիրտերը՝ տենդադին ծառայելու մեր ժողովուրդի բազմադիմի կարօտութիւններուն:

Իրեն հետ մենք ալ կրկնենք համեստօրէն, բայց ջերմապէս. «Քեզի կը նուիրեմ, ո՛վ Հայ ժողովուրդ, իմ բազմամեայ աշխատութիւններս՝ իբրեւ նուէր սիրոյ, վասնզի ինչ որ իմա է՝ ան քեզի կը պատահանի, եւ ինչ որ քուկդ է՝ ան իմա կը նկատեմ: Անոր համար, քեզի ծառայելը՝ ինծի պարծանք կը նկատեմ, մանաւանդ թէ լրումը իմ պարտականութիւններուս. քանի որ սկիզբէն՝ թէ՛ ես եւ թէ՛ այս Միաբանութիւնը կարգուած է Հայկազեան տոհմի մտաւոր ծառայութեան եւ Աստուծոյ փառքին» (Հայկազեան Բառարան, Ա. 1750, Ցառաջարան, էջ 19):

Հ. ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԱՆԱՆԵԱՆ

ԸՆԴՀ. ԱՐԲԱՆԱՅՐ

ՄԵԽԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վեմնիկ - Ս. Ղազար

7 Փետրուար, 1976